



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի հայցորդ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՌԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Կարևորելով երկրների մասնակցությունը աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացներին և ընդհանրապես միջազգային առևտրին՝ հողվածում որոշակիացվել է, թե արտահանման զարգացման ինչպիսի ռազմավարություն (բազմազանեցում, թե՛ մասնագիտացում) պետք է որդեգրեն ԵԱՏՄ երկրները: Հետևելով տեսական հետազոտություններին և մեթոդներին՝ որոշվել են ԵԱՏՄ երկրների արտահանման ու ներմուծման համակենտրոնացման և բազմազանեցման մակարդակները, ինչպես նաև վերլուծել է, թե ինչ ազդեցություն է թողնում տվյալ արտահանման համադրությունը տնտեսության ընդհանուր զարգացման, մասնավորապես՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշի վրա:

Հիմնաբառեր. արտահանում, ներմուծում, միջազգային առևտուր, մասնագիտացում, բազմազանեցում (դիվերսիֆիկացիա), համակենտրոնացում, ԵԱՏՄ

JEL: F1, F13, F19

Տնտեսագիտական գրականության մեջ՝ Ա. Սմիթից մինչև Հեքշեր-Օհլին-Սամուելսոն, պնդում են համեմատական առավելությունների հիման վրա միջազգային առևտրին երկրների մասնակցության կարևորության մասին¹, որը հնարավորություն է տալիս ապահովելու տնտեսական աճ և կայուն զար-

¹ Տե՛ս **Смит А.**, Исследование характера и причин национального богатства. М., “Политиздат”, 1962, էջ 334: **Samuelson P.**, Factor proportions and the Heksher-Ohlin Theorem “Economic Journal”, 1984:

զացում: Սակայն, Երկրորդ աշխարհամարտից հետո, եվրոպական տնտեսությունների վերականգնման և զաղութային համակարգի փլուզման հետևանքով, ավելի լայն տարածում ստացավ այն գաղափարը, որ զարգացող երկրների տնտեսական աճի և կայուն զարգացման համար որոշիչ է տնտեսության բազմատեսակացման, այլ ոչ թե մասնագիտացման ռազմավարության որդեգրումը²: Արտահանման բազմազանեցումը ստեղծում է անհրաժեշտ բոլոր պայմանները տնտեսության վրա շուկայական իրադրության բացասական ազդեցության մեղմման և տնտեսական մանկրների համար: Դա պայմանավորում է շուկայի արդյունավետությունը և օպտիմալ կառուցվածքը, արտահանվող ապրանքների տեսականու բազմազանեցումը, բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման տեսակարար կշռի ավելացումը, ինչպես նաև արտահանողների մուտքը նոր ապրանքային շուկաներ:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է տարբերակել ուղղահայաց և հորիզոնական բազմազանեցում հասկացությունները³: Սկզբնապես տնտեսագիտական գրականության մեջ հիմնավորվում էր ուղղահայաց բազմազանեցումը՝ որպես հումքային ապրանքներից դեպի արդյունաբերական արտադրանք արտահանման կառուցվածքի վերափոխում: Ուղղահայաց բազմազանեցումը ենթադրում է նոր ապրանքատեսակների յուրացում, որոնց արտադրության համար անհրաժեշտ է օգտագործել նախկինում հումքի կամ կիսաֆաբրիկատների ձևով արտահանվող ապրանքները: Բազմազանեցման այս ձևը կապված է տեխնոլոգիական շղթաների ձևավորման հետ՝ «հումքի արդյունահանում - վերամշակում - միջանկյալ արտադրանքի արտադրություն - բարձր սպառողական հատկանիշներ ունեցող ապրանքի արտադրություն - սպառում»:

Կարևորելով երկրների մասնակցությունը աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացներին՝ փորձենք պարզել, թե արտահանման զարգացման ինչպիսի ռազմավարություն՝ բազմազանեցում, թե՞ մասնագիտացում պետք է որդեգրեն ԵԱՏՄ երկրները:

Այսպես՝ արտահանման/ներմուծման աշխարհագրական համակենտրոնացման համաթվերը բնութագրում են որոշակի ապրանքի համաշխարհային շուկայի վիճակը այնպիսի բնութագրիչների միջոցով, ինչպիսիք են արտահանողների (ներմուծողների) թիվը և հիմնական արտահանողի (ներմուծողի) տեսակարար կշիռը շուկայում: Այս համաթվերի հաշվարկն իրականացվում է մի քանի եղանակով: Դրանցից ամենատարածվածը Հերֆինդալ-Հիրշմանի համաթիվն է⁴: Դա հաշվարկվում է որպես ոլորտում գործող ֆիրմաների իրականացրած վաճառքների ծավալների քառակուսիների գումար: Սակայն սույն համաթվի միջոցով հնարավոր է հաշվարկել նաև երկրի արտահանման ու ներմուծման համակենտրոնացման աստիճանը՝ որպես արտահանվող կամ ներմուծվող ապրանքների ծավալների քառակուսիների գումար⁵:

² Տե՛ս **Kemenya T., Storpera M.**, Is Specialization Good for Regional Economic Development? // Department of Geography & Environment, London School of Economy, London, 08 May 2014, էջ 12:

³ Տե՛ս **Портер М.**, Конкурентная стратегия. Методика анализа отраслей и конкурентов. М., «Альпина Паблишер», 7-е издание, 2017, էջ 269:

⁴ Տե՛ս **Manners-Bell J.**, Global Logistics Strategies: Delivering the Goods // Kogan Page 2013, էջ 98–99:


⁵ Տե՛ս **Գալոյան Ղ.**, Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հիմնախնդիրները և հեռանկարները, 00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2014, էջ 86:

$$H = \sum_{i=1}^N S_i^2, \tag{1}$$

որտեղ՝ H –ը Հերֆինդալ-Հիրշմանի համաթիվն է,
 S_i –ն՝ i ապրանքի բաժինը արտահանման/ներմուծման ծավալում,
 N –ը՝ արտահանվող/ներմուծվող ապրանքների քանակը:

Եթե սույն համաթիվը փոքր է 0.01-ից, ապա արտահանման/ներմուծման կառուցվածքը խիստ բազմազանեցված է: Եթե համաթիվը 0.01–0.15 միջակայքում է, ապա առևտրի կառուցվածքն ունի միջին համակենտրոնացում, 0.15–0.25 միջակայքի պարագայում չափավոր համակենտրոնացված է, իսկ 0.25-ից ավելի լինելու դեպքում բարձր համակենտրոնացված:

ԵԱՏՄ երկրների արտահանման համակենտրոնացման համաթվերը, որոնք բերված են գծապատկեր 1-ում, վկայում են, որ մրցակցության մակարդակները գործընկեր երկրներում միմյանցից տարբերվում են: Արտահանման համակենտրոնացման ամենաբարձր մակարդակը Ղազախստանում է, որը 2012 թ. 0.592 տոկոսային կետից 2016 թ. աճել է մինչև 0.506 տոկոսային կետը: Ղա առաջին հերթին պայմանավորված է երկրում արտահանման կողմնորոշում ունեցող մեծ ճյուղերի առկայությամբ և արդյունաբերական բազայի թույլ զարգացման մակարդակով: Արտահանման կողմնորոշում ունեցող արտադրանքների բնույթը ստիպում է, որ դրանք կենտրոնանան ոչ մեծ թվով արտադրողների ձեռքում, ուստի Ղազախստանը կարելի է բնութագրել որպես արտահանման խմբատիրային (օլիգոպոլիկ) կառուցվածք ունեցող երկիր:



Պճապատկեր 1. ԵԱՏՄ երկրների արտահանման համակենտրոնացման համաթվերը 2012–2016 թթ.⁶

Արտահանման համակենտրոնացման ամենացածր մակարդակը Բելառուսում է, որը տատանվում է 0.168–0.250 տոկոսային կետի շրջանակներում և ունի դրական միտում: Բելառուսում համակենտրոնացման համեմատաբար ցածր աստիճանը պայմանավորված է խորհրդային ժամանակաշրջանի արտադրական բազայի պահպանմամբ և տնտեսության կենտրոնացված կառավարմամբ, ինչը թույլ է տալիս մեծ թվով արտադրողների համար պահպանել այլ երկրների շուկաների հասանելիությունը՝ ակնհայտ կամ թաքնված դեմպինգային քաղաքականության շնորհիվ:

⁶ Տե՛ս <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx>

Հայաստանում ևս արտահանման համակենտրոնացման աստիճանը շատ բարձր չէ. 2016 թ. կազմել է 0.269 տոկոսային կետ: Հայաստանին բնորոշ են արտահանման կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական փոքրածավալ արտադրություններ, սննդի վերամշակման համեմատաբար խոշոր արտադրողների առկայություն, հանքահումքային արտադրանքի, ինչպես նաև թանկարժեք ու կիսաթանկարժեք մետաղների արտահանում: Արտահանման համակենտրոնացման աստիճանը բավականաչափ ցածր է նաև Ղրղզստանում, ինչը հիմնականում չինական ապրանքների վերաարտահանման (լայն սպառման ապրանքներ) և բազմատեսակ տեղական գյուղմթերքի արտահանման արդյունք է:

Վերջին տարիներին Ռուսաստանի արտահանման համակենտրոնացման համաթիվը ցուցաբերում է դրական միտում. 2012 թ. 0.382 տոկոսային կետից 2016 թ. կրճատվել է մինչև 0.305 մակարդակը: Փաստորեն, կարելի է պնդել, որ ԵԱՏՄ առանցքային երկու երկրները՝ Ղազախստանը և Ռուսաստանը, խմբավորման մյուս երկրների համեմատությամբ ունեն արտահանման ամենաբարձր համակենտրոնացման մակարդակը: Ընդ որում, Ռուսաստանի արտահանման համակենտրոնացման համաթիվը մոտ երկու անգամ ավելի պակաս է, քան Ղազախստանինը, քանի որ Ռուսաստանն ունի արտահանմանն ուղղված արդյունաբերական վերամշակման ենթակա ապրանքների ավելի լայն տեսականի:

ԵԱՏՄ երկրների ներմուծման համակենտրոնացման համաթիվերը վկայում են ներմուծման բազմազանեցման բավականաչափ բարձր մակարդակի մասին: Հետևաբար՝ նշված երկրների շրջանակներում արտաքին առևտուրը կարող է կատարվել բավականին սուր մրցակցային պայմաններում, ուստի պատժամիջոցների ներկա դրությունը կարող է խթան հանդիսանալ ներմուծման փոխարինման և ապրանքային հոսքերի ակտիվացման համար:

Այսպիսով՝ ԵԱՏՄ բոլոր երկրներում առկա է տնտեսության բացության բարձր մակարդակ: Այս պայմաններում ներտարածաշրջանային փոխադարձ առևտրի զարգացումը՝ երրորդ երկրներից ներմուծման փոխարինման նպատակով, կպահանջի սեփական արտադրության մրցունակության մակարդակի էական բարձրացում:

Աշխատանքի միջազգային բաժանման և երկրի մրցունակության գնահատման տեսանկյունից՝ կարևոր է ուսումնասիրել նաև ԵԱՏՄ երկրների արտահանման բազմազանեցման համաթիվը, որը ցույց է տալիս արտահանվող ապրանքների և ծառայությունների քանակության փոփոխությունը համաշխարհային առևտրի կառուցվածքի համեմատությամբ: Բազմազանեցման ոչ բարձր մակարդակը վկայում է տնտեսության արտադրական ոլորտի մրցունակության մեծ ներուժի մասին: Ընդ որում, ինտեգրման գործընթացների ազդեցության տեսանկյունից, տարածաշրջանային խմբավորման շրջանակներում ընդլայնվում են մրցակցային առավելությունները, ավելանում է փոխլրացման աստիճանը, չեզոքանում են տարածաշրջանում մրցակցային փոխգործակցության բացասական միտումները՝ նպաստելով առևտրային ու արդյունաբերական միասնացման դրական ազդեցության աճին: Արտահանման բազմազանեցման համաթիվը հաշվարկվում է երկրի արտահանման կառուցվածքում այս կամ այն ապրանքի՝ համաշխարհային արտահանման մասնաբաժնից դրա բացարձակ շեղման հիման վրա՝ հետևյալ բանաձևով.⁷


⁷ Stü Funke M. and Ruhwedel R., Export Variety and Economic Growth in East European Transition Economies. *Economics of Transition*, 13 (1), 2005, էջ 25–50:

$$S_j = \frac{\sum_{i=1}^n |h_{ij} - h_i|}{2}, \tag{2}$$

որտեղ՝ S_j – j երկրի արտահանման բազմազանեցման համաթիվն է,
 h_{ij} – i ապրանքի ծավալը երկրի համախառն արտահանման մեջ,
 h_i – i ապրանքի ծավալը համաշխարհային արտահանման մեջ:

Գծապատկեր 2-ում ԵԱՏՄ երկրների արտահանման բազմազանեցման ներկայացված համաթվերը փաստում են, որ խմբավորման անդամ գրեթե բոլոր երկրներն ունեն արտահանման լայն տեսականի, հետևաբար՝ միությունն ունի սեփական արտահանման ավելացման և ինտեգրման բլոկի ներսում ապրանքային հոսքերի ընդլայնման մրցակցային ներուժ:

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ բոլոր երկրները բազմազանեցման համաթիվով հետ են մնում զարգացած երկրների համապատասխան ցուցանիշներից, որոնց համար այս ցուցանիշը տեսականորեն սահմանված է 0.2–0.4 շրջանակներում, սակայն առաջ են անցնում զարգացող երկրների արժեքներից, որոնց շրջանակն է 0.8–0.9 տոկոսային կետը: Այնուամենայնիվ, բոլոր երկրներում էլ բազմազանեցման միտումը բացասական է, քանի որ ուսումնասիրվող 4 տարիների ընթացում համաթվի արժեքն աճել է: Բացառություն է կազմում Բելառուսը, որտեղ 2016 թ., 2012 թ. համեմատությամբ, համաթիվը նվազել է 0.068-ով: Արտահանման թույլ բազմազանեցումը ԵԱՏՄ երկրների տնտեսությունները դարձնում է ավելի զգայուն արտաքին շուկերի նկատմամբ, ներառյալ այն ցնցումները, որոնք առաջ են գալիս առևտրի պայմանների փոփոխության հետևանքով: Արտահանման թույլ բազմազանեցումը նաև փաստում է երկրների միջճյուղային առևտրի ցածր մակարդակի մասին, որի շարժիչ ուժը աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներին երկրների մասնակցության ընդլայնումն է և արտադրողականության աճը՝ ի հաշիվ մասնագիտացման խորացման արդյունքում մասշտաբի էֆեկտի: Այս առումով, արտահանման թույլ բազմազանեցումը արտադրողականության աճի, հետևաբար և կայուն տնտեսական աճի լուրջ խոչընդոտ է:




Գծապատկեր 2. ԵԱՏՄ երկրների արտահանման բազմազանեցման համաթվերը 1995–2017 թթ.⁸

ԵԱՏՄ երկրների արտահանման բազմազանեցման մակարդակների համեմատական վերլուծություն կատարելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել արտահանման/ներմուծման մասնագիտացումից երկրների կախվածու-

⁸ Տե՛ս <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx>

թյունը բացատրող տեսական մոտեցումները: Այսպես՝ Ջ. Իմբսը ապացուցում է, որ արտահանման բազմազանեցման մակարդակը կախված է երկրի տնտեսական զարգացման որոշակի փուլից: Օրինակ՝ ասիական երկրների արտահանման բազմազանեցման արագ աճը կարելի է բացատրել այդ երկրներում արձանագրված ՀՆԱ և տնտեսական զարգացման թռիչքային աճով⁹: Արտահանման բազմազանեցման/մասնագիտացման և բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ կախվածությունը ցույց տալու համար կառուցվել է դրա կոռելյացիայի ցրվածքի գծապատկերը, որը ցույց է տալիս ԵԱՏՄ երկրների բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ և արտահանման բազմազանեցման/մասնագիտացման կախվածությունը:



Գծապատկեր 3. ԵԱՏՄ երկրների բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ կախվածությունը արտահանման մասնագիտացման և բազմազանեցման մակարդակից

Ակնհայտ է, որ այս կախվածությունը ոչ գծային է, ինչը հաստատում է Ջ. Իմբսի տեսությունը: Սակայն, ի տարբերություն ԵԱՏՄ մյուս երկրների, Հայաստանում արտահանման մասնագիտացման/համակենտրոնացման ավելացումը 1%-ով հանգեցնում է 0.2% բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ անկման: Բելառուսում մասնագիտացման խորացումը ավելի դրականորեն է ազդում ՀՆԱ ավելացման վրա, քան բազմազանեցումը, իսկ Ղազախստանում, Ղրղզստանում ու Ռուսաստանում բազմազանեցման 1% աճը հանգեցնում է ՀՆԱ անկման, այնինչ մասնագիտացման խորացումը ՀՆԱ-ի վրա ունենում է դրական ազդեցություն: Մասնավորապես՝ Ռուսաստանում ՀՆԱ-մասնագիտացում/բազմազանեցում կապը բավական ուժեղ է, քանի որ 1%-ով մասնագիտացման խորացումը հանգեցնում է ՀՆԱ 0.86%-ով աճի, իսկ 1%-ով բազմազանեցման մեծացումը՝ 0.9%-ով ՀՆԱ անկման: Փաստորեն, եթե ԵԱՏՄ բոլոր երկրների համար ավելի նախընտրելի է մասնագիտացման խորացումը, ապա Հայաստանը, բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճի տեսանկյունից, ունի արտահանման բազմազանեցման քաղաքականության կիրառման կարիք: Այս օրինաչափությունները պետք է լինեն ԵԱՏՄ երկրների արտահանման խթանման ռազմավարության հիմքում, ինչը թույլ կտա ոչ միայն ընդլայնել երկրների առևտրատնտեսական կապերը, այլ նաև խորացնել միասնացման հարաբերությունները:

⁹ St u Imbs J., Wacziarg R., Stages of Diversification // American Economic Review, 93(1), 2013:

Օգտագործված գրականություն

1. Պալոյան Դ., Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հիմնախնդիրները և հեռանկարները, ատենախոսություն, Եր., 2014:
2. Портер М., Конкурентная стратегия. Методика анализа отраслей и конкурентов, М., “Альпина Пабlisher”, 7-е издание, 2017.
3. Смит А., Исследование характера и причин национального богатства, М., “Политиздат”, 1962.
4. Funke M. and Ruhwedel R., Export Variety and Economic Growth in East European Transition Economies. *Economics of Transition*, 13 (1), 2005.
5. Imbs J., Wacziarg R., Stages of Diversification // *American Economic Review*, №93 (1), 2013.
6. Kemenya T., Storpera M., Is Specialization Good for Regional Economic Development? // Department of Geography & Environment, London School of Economics, London, 08 May 2014.
7. Manners-Bell J., *Global Logistics Strategies: Delivering the Goods* // Kogan Page, 2013.
8. Samuelson P., Factor proportions and the Heksher-Ohlin Theorem “*Economic journal*”, 1984.

ВРАМ КАРАПЕТЯН

Соискатель кафедры МЭО АГЭУ

Стратегия экспортной специализации как фактор повышения конкурентоспособности ЕАЭС. – Подчеркивая важность участия стран в региональном разделении труда и международной торговле в целом, в статье определяется, какой стратегии расширения экспорта – диверсификации или специализации, должны придерживаться страны ЕАЭС. Следуя теоретическим исследованиям и методам, были определены уровни концентрации и диверсификации экспорта и импорта стран ЕАЭС, а также проанализировано влияние экспорта на общее экономическое развитие, в частности, на ВВП на душу населения.

Ключевые слова: экспорт, импорт, международная торговля, специализация, диверсификация, концентрация, ЕАЭС.

JEL: F1, F13, F19

VRAM KARAPETYAN

Post-graduate at the Chair of IER at ASUE

Strategy of Export Specialization As a Factor of Increasing the Competitiveness of the EAEU. – Emphasizing the importance of the participation of countries in the regional division of labor and international trade in general, the article determines which export expansion strategy - diversification or specialization - must be adopted by the EAEU countries. Following the theoretical studies and methods, the levels of concentration and diversification of exports and imports of the EAEU countries, as well as the impact of exports on overall economic development, in particular on per capita GDP, has been analyzed.

Key words: export, import, international trade, specialization, diversification, concentration, EAEU.

JEL: F1, F13, F19